ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Կ. ԲՐՈՒՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 20-21.07.2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԴՐՎԱԾ ՀԱՐՑԻ

Օրակարգ՝

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի բյուջետային հայտի նախագծի քննարկում և հավանության արժանացում:

Հայտը ներկայացվել է ընդամենը 1,617,423.9 հազար դրամի սահմաններում, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 1,509,843.9 հազար դրամ և կապիտալ ծախսերի գծով՝ 107,580.0 հազար դրամ:

Առաջարկում ենք հայտը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.07.2021թ. N 1171-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրին, որը ներառում է նաև 2022թ. պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակը, մասնավորապես, 1213 ծրագրի 11001 միջոցառման գծով 2022թ. համար նախատեսվել է 1,371,973.3 հազար դրամ:

Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի մոտ 2021 թվականի հունիսի 30-ին ժամը 10:00-ին կայացած՝ ՀՀ պետական բյուջեի կատարողականի, ընթացիկ իրավիճակի, 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման և առաջիկա հարկաբյուջետային բարեփոխումների մասին խորհրդակցության N Վ/54-2021 արձանագրության 6-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ առաջիկա ժամանակահատվածում անհրաժեշտ է խուսափել ընթացիկ ծախսերի ծավալի մեծացմանը հանգեցնող պարտավորություններ ստանձնելուց և դրա հնարավորությանն անդրադառնալ միայն տնտեսական աճի առաջանցիկ տեմպեր գրանցելու դեպքում:

Ընդ որում, 2022թ. պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակի ցուցանիշից տարբերվող հայտ կարող է ներկայացվել միայն ուժի մեջ մտած այնպիսի

իրավական ակտի առկայության դեպքում, որը հանգեցնում է պահպանման ծախսերի ավելացման:

Սույն դիտարկումները հանդիսանում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 20-21.07.2021թ. հեռակա (էլեկտրոնային) քվեարկությամբ անցկացված նիստի 21.07.2021թ. N 03 արձանագրության անբաժանելի մասը: